



ORGANIC  
AGRICULTURE  
SUPPORT  
INITIATIVE



AUSTRIAN  
DEVELOPMENT  
AGENCY

OASI2016/052  
12.10.2016թ.

ՀՀ Վայոց ձորի մարզպետ  
Հարություն Սարգսյանին

ք. Եղեգնաձոր, Շահումյան 5  
Վայոց ձորի մարզ  
Հայաստանի Հանրապետություն

Հարգելի պարոն Սարգսյան,


Ավստրիական զարգացման գործակալության անունից թույլ տվեք սիրով տեղեկացնել, որ *սույն թվականի սեպտեմբերի 29-ին* Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող Օրգանական գյուղատնտեսության աջակցության նախաձեռնության (ՕԳԱՆ) ծրագրի շրջանակներում *հայտարարվեց Փոքր ֆերմերային աջակցության ծրագրի հայտամրցույթը, որը նախատեսված է փոքր ֆերմերների և ֆերմերային խմբերի համար*՝


Մեծապես կարևորելով մարզպետարանի դերը Հայաստանում օրգանական գյուղատնտեսության նախադրյալների ներդրման և փոքր ֆերմերներին ուղղված աջակցության գործընթացում՝ *խնդրում ենք Ձեր օժանդակությունը կից ներկայացված բաց հայտամրցույթի հրավերը ամբողջ մարզով հնարավորինս լայնամասշտաբ տարածելու հարցում*: Հնարավորության դեպքում, խնդրում ենք հրավերը փակցնել մարզպետարանի տեղեկատվական ցուցատախտակին, ինչպես նաև ուղարկել բոլոր համայնքների ղեկավարներին հայտարարությունը տարածելու խնդրանքով: Որպեսզի բազմաթիվ ֆերմերներ հնարավորություն ունենան տեղեկանալու և օգտվելու նման աջակցությունից, խնդրում ենք, հնարավորության դեպքում, նաև հայտարարությունը տեղադրել Ձեր կայքէջում, ուղարկել էլեկտրոնային ցուցակի հասցեներով կամ պարզապես տեղեկացնել ցանկացողներին նման հնարավորության մասին:

Սույն նամակին կից ներկայացված է նաև հայտամրցույթի ամբողջ փաթեթը հայերեն լեզվով, որը կարող եք նաև գտնել և ներբեռնել Ավստրիական զարգացման գործակալության կայքէջից հետևյալ հղումով. <http://www.entwicklung.at/ada/calls-auftraege/calls-detail/artikel/organic-agriculture-support-initiative-oasi/>

Միրով ակնկալում ենք Ձեր համագործակցությունը:

Հարգանքով՝

  
Դեյվիդ Մուքենհուբեր  
ՕԳԱՆ ծրագրի ղեկավար

  
Հասմիկ Ալթունյան  
ՕԳԱՆ, Փոքր ֆերմերային  
աջակցության ծրագրի համակարգող

Ավստրիայի Հանրապետության դեսպանության տեխնիկական համագործակցության գրասենյակ  
Օրգանական գյուղատնտեսություն աջակցության նախաձեռնություն  
Էրևանի-Վլադա քիզնե-կենտրոն, սեն. 712 - 716  
ՀՀ, Երևան, Վ. Սարգսյան փող. 26/1  
Հեռ. +374 60 650 281  
Էլ. հասցե՝ oasi@ada.gv.at

2.2. 2016 թ. 10.10.2016  
5058  
13

*<Քաղաքապետարանի/գյուղապետարանի անունը>*

*< Քաղաքապետարանի/գյուղապետարանի հասցեն >*

## Տեղեկանք

Ես, ներքոստորագրյալս, <համայնքի անուն> -ի քաղաքապետ/գյուղապետ, այսուհետ հայտարարում եմ, որ պրն./տկն. <ղիմորդի անուն>-ը, բնակվում է <ղիմորդի հասցե> հասցեում, զբաղվում է գյուղատնտեսական գործունեությամբ <ամսաթիվ> -ից:

- *<Գյուղատնտեսական գործունեության նկարագրություն>*
- *<Ակտիվների ցանկ/սարքավորումներ>*
- *<Գյուղատնտեսական հողատարածք>*

Անուն, ազգանուն՝

Ամսաթիվ՝

Ստորագրություն՝



## **ՀԱՅՏԱՄՐՑՈՒՅԹԻ ՀՐԱՎԵՐ**

Օրգանական գյուղատնտեսության աջակցության նախաձեռնություն (ՕԳԱՆ)

**ՓՈՔԸ ՖԵՐՄԵՐՆԵՐԻ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԿԻՐ**

**Հայտամրցույթի համարը՝ No 6534-01/2015/Gen V/15-L&R/2016**

Ավստրիական զարգացման գործակալությունը (ԱԶԳ) Եվրոպական միության և ԱԶԳ-ի ֆինանսական աջակցությամբ Հայաստանում օրգանական գյուղատնտեսությունը խթանելու նպատակով դիմումներ է ընդունում ՕԳԱՆ ծրագրի հայտամրցույթի մասնակցության համար:

Սիրով հրավիրում ենք օրգանական գյուղատնտեսական մթերքի արտադրությամբ հետաքրքրվող *փոքր ֆերմերներին* և *փոքրածավալ գյուղատնտեսական մթերք վերամշակողներին*, ովքեր ունեն գործող ֆերմերային տնտեսություն, և/կամ մշակում են հող, զբաղվում են վայրի խոտաբույսերի և հատապտուղների հավաքմամբ և/կամ գյուղատնտեսական/մեղվաբուծական արտադրանքի արտադրությամբ և վերամշակմամբ, դիմելու Փոքր ֆերմերների աջակցության ծրագրին:

Հրավերի նպատակն է խրախուսել և աջակցել փոքր ֆերմերներին և փոքրածավալ վերամշակողներին ավանդականից անցում կատարել *օրգանական գյուղատնտեսության* և/կամ զարգացնել իրենց արդեն իսկ գոյություն ունեցող օրգանական արտադրության և վերամշակման կարողությունները:

Հայտադիմումների ձևին, նախնական պայմաններին և դիմելու գործընթացին կարող եք ծանոթանալ հետևյալ կայքէջից. <http://www.entwicklung.at/ada/calls-auftraege/>

Հարցերի, պարզաբանումների կամ խորհրդատվություն ստանալու համար խնդրում ենք ուղարկել էլ. նամակ [oasi@ada.gv.at](mailto:oasi@ada.gv.at) և [hasmik.altunyan@ada.gv.at](mailto:hasmik.altunyan@ada.gv.at) էլ. հասցեներին, զանգահարել +374 60 650 286 հեռախոսահամարով, կամ այցելել

**Ավստրիայի Հանրապետության դեսպանության  
տեխնիկական համագործակցության գրասենյակ  
Էրեբունի Պլազա բիզնես կենտրոն, 7-րդ հարկ, սեն. 714 – 716  
ՀՀ, ք. Երևան, Վ. Սարգսյան 26/1**

Դիմումների ներկայացման վերջնաժամկետն է **2016թ.-ի հոկտեմբերի 24-ը, տեղական ժամանակով մինչև ժամը 16:00**: Հայտադիմումները պետք է ուղարկվեն փակ և կնքված և/կամ ստորագրված ծրարով: Ձեռագիր գրված և վերջնաժամկետից հետո ներկայացված հայտադիմումները չեն ընդունվում: Հայտադիմումները գնահատվելու են նախապես սահմանված չափորոշիչներով և մեթոդոլոգիայով: Ծրագիրը կապ կհաստատի միայն ընտրված դիմորդների հետ:

Հարգանքով՝  
ՕԳԱՆ ծրագրի աշխատակազմ

Ավստրիայի Հանրապետության դեսպանության տեխնիկական համագործակցության գրասենյակ  
Օրգանական գյուղատնտեսության աջակցության նախաձեռնություն  
ՀՀ, Երևան, Վ. Սարգսյան 26/1  
Հեռ.՝ +374 60 650281 • էլ. հասցե՝ [oasi@ada.gv.at](mailto:oasi@ada.gv.at) • [www.facebook.com/oasiarmeria](http://www.facebook.com/oasiarmeria)



**Օրգանական գյուղատնտեսության աջակցության  
նախաձեռնություն (ՕԳԱՆ)**

***Փոքր ֆերմերների աջակցության ծրագիր***

***Հայտադիմումների հրավեր***

**Հայտադիմումի ձև**

**Քաղվածք: 6534-01/2015**

**Հայտադիմումների և կից պահանջվող փաստաթղթերի ընդունման  
վերջնաժամկետն է**

**24 հոկտեմբերի, 2016թ.,**

**Երևանի ժամանակով ժամը 16:00**

<b>Հայտ #</b>	
---------------	--

*(միայն պաշտոնական օգտագործման համար)*

Ավստրիայի Հանրապետության դեսպանության տեխնիկական համագործակցության գրասենյակ  
Օրգանական գյուղատնտեսության աջակցության նախաձեռնություն  
22, Երևան, Վ. Մարգարյան 26/1

Հեռ. +374 60 650281 • էլ. հասցե oasi@ada.gv.at • www.facebook.com/oasiarmenia

Խնդրում ենք լրացնել այս ձևը էլեկտրոնային եղանակով: Օախսերի և թափոնների նվազեցման նպատակով խորհուրդ ենք տալիս փաստաթղթերի պահպանման համար օգտագործել միայն թուղթ (ոչ պլաստիկ թղթապանակներ կամ էլաբաժանիչներ). Հնարավորության դեպքում խորհուրդ ենք տալիս երկկողմանի տպագրություն:

Ծրագրի անվանումը

Ծրագրի տևողությունը

Սկիզբ “ \_\_\_\_\_ ” \_\_\_\_\_ 2016թ./ 2017թ.

Ավարտ “ \_\_\_\_\_ ” \_\_\_\_\_ 2017թ./ 2018թ.

**Բաժին Ա. քննիչանույր տեղեկություններ**

1. Դիմորդի անունը

2. Իրավական կարգավիճակը (եթե դիմորդն ունի այդպիսի կարգավիճակ)

3. Կոնտակտային տվյալներ<sup>1</sup>  
(գրանցման հասցե, հեռախոսահամար, էլ-փոստ)

4. Մարզը և համայնքը, որտեղ դիմորդը հիմնադրել է/գրանցել է ֆերմերային տնտեսությունը, հավաքման և/կամ վերամշակման բիզնեսը

5. Մարզը և համայնքը, որտեղ իրականացվելու է ծրագիրը (եթե տարբերվում է վերը նշված հիմնադրման/գրանցման վայրից)

6. Ծրագրի քննիչանույր բյուջեն

7. ՕԳԱՆ աջակցության չափը (Եվրո)

8. Դիմորդի ներդրումը

Գումարը (Եվրո)

Սեփական ներդրման աղբյուրը

- Սեփական խնայողություն
- Վարկ
- Այլ \_\_\_\_\_

9. Խնդրում ենք նշել, թե որտեղից եք տեղեկացել Փոքր Ֆերմերների աջակցություն ծրագրի հայտադիմումների հրավերի մասին

- ՕԳԱՆ ծրագրից
- Մարզպետարանից
- Համայնքապետարանից
- Գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոնից
- Ծանոթներից, ընկերներից, բարեկամներից
- Այլ (խնդրում ենք նշել) \_\_\_\_\_

**Բաժին Բ. գյուղատնտեսական գործունեության և արտադրական կարողությունների մասին**

10. Ե թք եք սկսել Ձեր գյուղատնտեսական գործունեությունը:

<Ամիս/տարի> \_\_\_\_\_

<sup>1</sup> Հասցեի, հեռախոսահամարի, ֆաքսի և էլ-փոստի ցանկացած փոփոխության մասին անհրաժեշտ է տեղյակ պահել Պայմանագրային կողմին: Պայմանագրային կողմը պատասխանատվություն չի կրում այն դեպքում, երբ չկարողանա կապ հաստատել դիմորդի հետ:

11. Ընտրեք Ձեր թիրախային արժեշղթան(ները)	<input type="checkbox"/> <i>Թարմ և վերամշակված մրգեր, ներառյալ հյութեր, պահածոներ, չոր կամ սառեցված մրգեր և այլ կողմնակի արտադրանքներ (կորիզի յուղեր, էքստրակտներ, բույրեր և այլն.)</i> <input type="checkbox"/> <i>Թարմ և վերամշակված հատապտուղներ ներառյալ հյութեր, պահածոներ, չոր և սառեցված հատապտուղներ և այլ կողմնակի արտադրանք (կորիզի յուղեր, էքստրակտներ, բույրեր և այլն.)</i> <input type="checkbox"/> <i>Թարմ և վերամշակված խոտաբույսեր ներառյալ չոր խոտաբույսեր, թեյեր, դեղաբույսեր և այլ կողմնակի արտադրանքներ (կորիզի յուղեր, էքստրակտներ, բույրեր և այլն)</i> <input type="checkbox"/> <i>Մեղր և մեղվաբուծական արտադրանք</i> <input type="checkbox"/> <i>Փորձարարական մշակաբույսեր (օրինակ ցորեն, հաճար, լոբազգիներ (սիսեռ, լոբի և ոսպ), և այլն) և այլ կողմնակի արտադրանքներ</i>
--	---

12. Ներկայացրեք Ձեր գյուղատնտեսական գործունեության ընդհանուր նկարագրությունը (Ի՞նչ եք արտադրում: Որո՞նք են հիմնական դժվարությունները): (150-200 բառ):

13. Ներքևի աղյուսակում նկարագրեք այն հիմնական միջոցները, որ ներդրել եք Ձեր բիզնեսում (5 ամենակարևոր հիմնական միջոցները, ներառյալ հող, սարքավորումներ, գործիքներ):

Հիմնական միջոցի անունը	Միավորների քանակ	Միավորի ներկա շուկայական գինը (ՀՀԴ)	Հիմնական միջոցների ընդհանուր արժեքը (ՀՀԴ)
1.			
2.			
3.			
4.			
5.			

14. Ներքևում բերված աղյուսակում ներկայացրեք մանրամասն տեղեկատվություն վերջին երկու տարիների ընթացքում Ձեր կողմից արտադրված թարմ և վերամշակված գյուղատնտեսական արտադրանքի միջին տարեկան ծավալի, միջին վաճառքի քանակի և միջին գների վերաբերյալ: Վայրի հավաքի պարագայում խնդրում ենք նշել Ձեր հավաքած խոտաբույսի և/կամ հատապտղի անունը, տարեկան հավաքման և վաճառքի միջին քանակների վերաբերյալ տեղակատվություն: Խնդրում ենք նշել 3 արտադրանքից ոչ ավել:

Գյուղատնտեսական արտադրանքի անունը	Արտադրված/հավաքված արտադրանքի քանակը	Վաճառքի քանակը	Միավորի գինը (ՀՀԴ)	Ընդհանուր վաճառքը (ՀՀԴ)
1.				
2.				
3.				

15. Որո՞նք են Ձեր թիրախային շուկաները (խնդրում ենք նշել բոլոր թիրախային շուկաները և դրանց

անունները):

Արտադրանքի անունը 1. \_\_\_\_\_

- Տեղի հավաքման կենտրոն
- Սուպերմարկետների ցանց (նշեք անունը)
- Վերամշակող կազմակերպություն (նշեք անունը)
- Արտահանման շուկաներ (նշեք երկիրը)
- Ֆերմերային շուկա (նշեք վայրը/անունը)
- Այլ (խնդրում ենք նշել)

Արտադրանքի անունը 2. \_\_\_\_\_

- Տեղի հավաքման կենտրոն
- Սուպերմարկետների ցանց (նշեք անունը)
- Վերամշակող կազմակերպություն (նշեք անունը)
- Արտահանման շուկաներ (նշեք երկիրը)
- Ֆերմերային շուկա (նշեք վայրը/անունը)
- Այլ (խնդրում ենք նշել)

Արտադրանքի անունը 3. \_\_\_\_\_

- Տեղի հավաքման կենտրոն
- Սուպերմարկետների ցանց (նշեք անունը)
- Վերամշակող կազմակերպություն (նշեք անունը)
- Արտահանման շուկաներ (նշեք երկիրը)
- Ֆերմերային շուկա (նշեք վայրը/անունը)
- Այլ (խնդրում ենք նշել)

**Բաժին Գ. առաջիկա ծրագրերը և դրանց ազդեցությունը**

16. Նկարագրեք Ձեր Օրգանական գյուղատնտեսության գործողությունները (առավելագույնը 200 բառ):

- Եթե Ձեր գյուղատնտեսական գործողությունները հավաստագրված են որպես օրգանական, խնդրում ենք նկարագրել Ձեր փորձը. որ գործողությունն է հավաստագրված և բանի տարի է: Օրգանական գյուղատնտեսության անցումը ինչպիսի ազդեցություն է ունեցել Ձեր ֆերմերային բիզնեսի վրա: Ինչպես է բարելավվել արտադրանքի վաճառքը և մուտքը շուկաներ:
- Եթե դուք նախատեսում եք անցնել օրգանական գյուղատնտեսության, խնդրում ենք նշել պատճառները և հեռանկարները: Համաձայն Ձեր կանխատեսումների, օրգանական գյուղատնտեսության անցումը ինչպե՞ս կբարելավի Ձեր արտադրանքի վաճառքը:

17. Խնդրում ենք նկարագրեք ինչպե՞ս եք պատրաստվում բարելավել/ընդլայնել ձեր բիզնեսը առաջիկա 2 տարիների ընթացքում: Ի՞նչը կարող է խանգարել և ի՞նչը օգնել Ձեզ: (առավելագույնը 200 բառ)

18. Ի՞նչն է նոր/տարբեր Ձեր ֆերմերային բիզնեսում (առավելագույնը 100 բառ):

19. Ովքե՞ր են ներգրավվելու Ձեր ծրագրում (կարող են ներառվել մասնակցություն ցուցաբերող ընտանիքի անդամները, ֆերմերային խմբերը, հարևանները, կոոպերատիվի անդամները, և այլն): Ո՞րն է լինելու նրանց դերը և ինչպե՞ս են նրանք օգտվելու իրականացվող ծրագրից: Եթե կան երիտասարդներ կամ հաշմանդամություն ունեցող մարդիք, որոնք որևէ կերպ ներգրավվելու և օգտվելու են ծրագրից, խնդրում ենք նշել:

20. Նախատեսու՞մ եք արդյոք ներգրավել վճարովի աշխատուժ:

- Այո
- Ոչ

Եթե ընտրել եք “այո” պատասխանը, խնդրում ենք նշել թե քանի աշխատող եք պատրաստվում վարձել: Խնդրում ենք մանրամասն ներկայացնել արդյո՞ք աշխատակիցները կլինեն մշտական թե՞ սեզոնային և ինչպիսի՞ ծառայություններ կմատուցեն Ձեր բիզնեսին:

**Բաժին Դ. գիտելիքի և տեղեկատվության հասանելիություն**

21. Ընտրված դիմորդները հնարավորություն կունենան մասնակցելու օրգանական գյուղատնտեսության վերաբերյալ դասընթացներին: Խնդրում ենք նկարագրել/թվարկել օրգանական գյուղատնտեսությանն առնչվող այն թեմաները, որոնց շուրջ կարիք ունեք բարելավելու Ձեր գիտելիքները:

22. Ընտրվելու դեպքում պատրա՞ստ եք արդյոք կիսել Ձեր գիտելիքները այլ ֆերմերների հետ:

- Այո
- Ոչ

Եթե “այո” խնդրում ենք նշել, թե ինչպես եք պատրաստվում փոխանցել այն (առավելագույնը 100 բառ):

23. Կտրամադրե՞ք արդյոք Ձեր այգին/արտադրական տարածքը փորձացուցադրական նպատակներով (օրինակ՝ հյուրընկալել այլ ֆերմերների փորձի փոխանակման համար)

24. Խնդրում ենք անհրաժեշտության դեպքում տրամադրեք հավելյալ տեղեկատվություն Ձեր գործունեության վերաբերյալ: Հավելյալ փաստաթղթերը, ինչպես օրինակ՝ պայմանագրեր, բիզնես ծրագրեր և այլն կարող են կցվել սույն հայտադիմումին:



**Հավելված I. Բյուջե**

Խնդրում ենք ներկայացնել ծրագրի շրջանակներում նախատեսված գնումների ցանկը՝ յուրաքանչյուր տողում նշելով տվյալ ապրանքի մոտավոր շուկայական արժեքը: Նախատեսված յուրաքանչյուր ներդրման համար խնդրում ենք նշել ֆինանսավորման աղբյուրը՝ \* ներառելով այն համապատասխան սյունակում:

Գյուղատնտեսական ներդրանքներ և այլ ծախսեր	Միավոր	Միավորի արժեք (Եվրո)	Ընդհանուր արժեքը (Եվրո)	
			Մեֆական ներդրումներ	ՕԳԱՆ աջակցություն
<b>1. Գյուղատնտեսական սարքավորումներ</b>				
Օրինակ՝ սառնարանային պահեստի սարքավորումներ, էլեկտրական չորանոց, փաթեթավորման սարք, հակակարկտային ցանց, խտսինձիչ, ջերմոց, և այլն:				
<b>2. Գյուղատնտեսական գործիքներ</b>				
Օրինակ՝ էռի մկրատ, հողի խոնավաչափ, հողի ջերմաչափ, հողի pH ստուգելու սարք և այլն:				
<b>3. Այլ գյուղատնտեսական ներդրանքներ</b>				
Օրինակ՝ օրգանական սերմեր, տնկիներ, և այլն				
Հավաստագրման վճար 3 տարվա համար**				
<b>Ծրագրի ընդհանուր արժեքը</b>				
<b>ՕԳԱՆ աջակցություն</b>				

\*Կարևոր նշում՝ բյուջեում նախատեսված յուրաքանչյուր ապրանքի գնում կարող է ունենալ միայն մեկ ֆինանսավորման աղբյուր:

\*\* Օրգանական հավաստագրման արժեքը պետք է վճարվի դիմորդի կողմից:

**Հավելված 2. Շահառուների ցանկը և նրանց կոնտակտային տվյալները**

Խնդրում ենք նշել այն մարդկանց անունները, որոնք որևէ կերպ ներառվելու են Ձեր օրգանական ֆերմերային գործունեության մեջ և/կամ օգտվելու են Ձեր ծրագրից: Շահառուների ցանկը կարող է ներառել նաև ընտանիքի անդամներին:

Շահառուի անունը, շահառուի կապը դիմորդի և ծրագրի հետ	Շահառուի կոնտակտային տվյալները (հասցե, հեռախոսի համար, էլ-փոստ)	Անձնագրային տվյալներ (համարը, թողարկման ամսաթիվը)*

\*Կարևոր նշում՝ Հավելված 2-ում նշված յուրաքանչյուր շահառուի անձնագրի պատճենն /ներառյալ գրանցման էջը/ պետք է կցվի սույն հայտադիմումին: